Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 2

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Իջևան *29.04.2013թ.*

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. *ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության զեկույցի հաստատում:*

/Զեկուցող Ա.Շ.Մարգարյան/

Նիստին մասնակցում էին գիտական խորհրդի 35 անդամներից՝ 26-ը:

Նիստին հրավիրվել և մասնակցում էին մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների պատասխանատու աշխատողներ, բոլոր ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս.Ա. Առաքելյանը:

<<ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնա-վերլուծության>> մասին զեկուցումով հանդես եկավ ուսումնամեթոդական վարչության կրթության որակի ապահովման և գնահատման բաժնի վարիչ Ա.Շ. Մարգարյանը:

Զեկուցողը նշեց, որ ինչպես հայտնի է անցյալ տարվանից մեկնարկել է ՄՈՒՀ-երի ինստիտուցիոնալ հավատագրման գործընթացը: Ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակում ընթացող ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծության և ինքնագնահատման իրականացման անհրաժեշտությունից ելնելով տնօրենի 11.01.2013թ. թիվ 4 §25 հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի օգնությամբ մասնաճյուղում իրականացվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություն: Ա. Շ. Մարգարյանը ներկայացրեց մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, որում ամփոփված են հետևյալ հարցերի վերաբերյալ ուսումնասիրությունները՝

- առաքելությունը և նպատակները,

-կառավարումն ու վարչարարությունը,

-մասնագիտության կրթական ծրագրերը,

- ուսանողները,

-պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը,

-հետազոտությունը և զարգացումը,

-ենթակառուցվածքը և ռեսուրսները,

-հասարակական պատասխանատվությունը,

-արտաքին կապերը և միջազգայնացումը,

-որակի ներքին ապահովման համակարգը:

Այնուհետև ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբի անդամներ Ա. Խաչատրյանի, Ա. Սարհատյանի, Մ. Ճաղարյանի կողմից ներկայացվեցին մի շարք կարևորագույն խնդիրների վերաբերյալ մասնաճյուղում իրականացրած աշխատանքների հաջողության երաշխիքները /ուժեղ կողմերը/, եղած թերությունների հիմնական պատճառները /թույլ կողմերը/, ինչպես նաև այն հնարավորությունները, որոնք պետք է օգտագործել աշխատանքները բարելավելու համար:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը գոհունակություն հայտնելով աշխատանքային խմբի բարձր պատասխանատվությամբ կատարած մեծածավալ ուսումնասիրությունների, այն ըստ ամենայնի ամփոփելու և զեկույցը պատրաստելու համար առաջարկեց հաստատել մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության զեկույցը և այն ներկայացնել Երևանի պետական համալսարանի Որակի ապահովման կենտրոն և այն տեղադրել մասնաճյուղի կայքում:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության զեկույցը և այն ներկայացնել Երևանի պետական համալսարանի որակի ապահովման կենտրոն:
2. Իջևանի մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության զեկույցը տեղադրել մասնաճյուղի կայքում:

3. Հանձնարարել տնօրենությանը՝ մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման կարճաժամկետ պլանի հիմքում դնել ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գնահատության արդյունքները:
4. Հանձնարարել կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ աշխատակիցների հետ ուսումնասիրել մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, 2013-2014 ուսումնական տարվա աշխատանքները պլանավորելիս հիմք ընդունել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զարգացման /2011-2015թթ./ կարճաժամկետ ծրագրերը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ.Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն. Գ.ՍՏԵՓԱՆՅԱՆ